«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

11 Հոկտեմբերի 2021, N 5 - 1

2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Լսելով և քննարկելով **«2021-2022 ուսումնական տարվա ընդունելության արդյունքների մասին»** հարցը (զեկուցող՝ ընդունող հանձնաժողովի նախագահի տեղակալ, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ա.Վ.Գրիգորյան)՝ գիտական խորհուրդն արձանագրում է. ընդունող հանձնաժողովը գործել է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հաստատած կանոնակարգերի և «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության հաստատած կարգերի պահանջների համաձայն: Ընդունելության գործընթացի կազմակերպման նպատակով ընդունող հանձնաժողովը ձևավորել է դիմում հայտերի ընդունման առցանց հարթակ, իսկ արտաքին կապերի դեպարտամենտը դիմորդների մասնագիտական կողմնորոշմանը նպաստելու նպատակով ձևավորել է ՀՊՏՀ դիմորդի օգտահաշիվներ սոցիալական ցանցերում, ինչպես նաև դիմորդների համար նախատեսված տեղեկատվական հարթակներ համալսարանի կայքէջում:

Ըստ համալսարանի ընդունելության պլանի՝ առկա ուսուցման բակալավրիատին հատկացվել է 1244 տեղ, որից 60-ը՝ ուսման վարձի լրիվ (100%) փոխհատուցմամբ, 1184-ը՝ վճարովի ուսուցման համակարգում: Առկա 1244 տեղերին դիմել է 1386 դիմորդ, որից ուսման վարձի լրիվ (100%) փոխհատուցմամբ և վճարովի ուսուցման համակարգում ընդունվել են 1107-ը (այդ թվում՝ արտոնություններով և սփյուռքահայերի համար կազմակերպված հարցազրույցով): Առկա ուսուցման բակալավրիատում ընդունվածների թիվը +/-5% ճշգրտությամբ համապատասխանել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 2018-2022 թթ. զարգացման ռազմավարությամբ կանխատեսված լավատեսական սցենարին (2021-2022 ուսումնական տարվա համար՝ 1167 ընդունվող):

ՀՊՏՀ-ն պահպանել է ՀՀ բուհերի բակալավրական կրթական ծրագրերին դիմորդների մասնագիտական կողմնորոշման բնագավառում 2020-2021 ուսումնական տարվանից գրանցած իր 2-րդ դիրքը: 2020-2021 ուսումնական տարվա նկատմամբ ՀՊՏՀ դիմորդների և ընդունվողների տեսակարար կշիռը ՀՀ բոլոր բուհերի դիմորդների և ընդունվողների թվում բարելավվել է, համապատասխանաբար՝ 0,7 և 0,4 տոկոսային կետերով:

Գյումրու մասնաճյուղում ըստ ընդունելության պլանի՝ առկա ուսուցման բակալավրիատին հատկացվել է 195 տեղ, որից 8-ը՝ ուսման վարձի լրիվ (100%) փոխհատուցմամբ, 187-ը՝ վճարովի ուսուցման համակարգում: Առկա 195 տեղերին դիմել է 121

դիմորդ, որից ուսման վարձի լրիվ (100%) փոխհատուցմամբ և վճարովի ուսուցման համակարգում ընդունվել են 98-ը (այդ թվում՝ արտոնություններով և սփյուռքահայերի համար կազմակերպված հարցազրույցով):

Եղեգնաձորի մասնաճյուղում ըստ ընդունելության պլանի՝ առկա ուսուցման բակալավրիատին հատկացվել է 60 տեղ, որից 3-ը՝ ուսման վարձի լրիվ (100%) փոխհատուցմամբ, 57-ը՝ վճարովի ուսուցման համակարգում: Առկա 60 տեղերին դիմել է 22 դիմորդ, որից ուսման վարձի լրիվ (100%) փոխհատուցմամբ և վճարովի ուսուցման համակարգում ընդունվել են 14-ը (այդ թվում՝ արտոնություններով և սփյուռքահայերի համար կազմակերպված հարցազրույցով):

Ըստ համալսարանի ընդունելության պլանի՝ հեռակա ուսուցման բակալավրիատին հատկացվել է 795 տեղ: Հեռակա 795 տեղերին դիմել է 428 դիմորդ, որից ընդունվել են 351-ը (առանց սփյուռքահայերի համար կազմակերպված հարցազրույցով ընդունելության տվյալի): Գումարային առումով համալսարանի առկա և հեռակա կրթաձևերում 2021-2022 ուսումնական տարում ընդունվողների թիվը 2020-2021 ուսումնական տարում ընդունվածների թվից ավելի է 15-ով:

Գյումրու մասնաճյուղում ըստ համալսարանի ընդունելության պլանի՝ հեռակա ուսուցման բակալավրիատին հատկացվել է 60 տեղ: Հեռակա 60 տեղերին դիմել է 44 դիմորդ, որից ընդունվել են 22-ը (առանց սփյուռքահայերի համար կազմակերպված հարցազրույցով ընդունելության տվյալի):

Եղեգնաձորի մասնաճյուղում ըստ համալսարանի ընդունելության պլանի՝ հեռակա ուսուցման բակալավրիատին հատկացվել է 40 տեղ: Հեռակա 40 տեղերին դիմել է 37 դիմորդ, որից ընդունվել են 27-ը (առանց սփյուռքահայերի համար կազմակերպված հարցազրույցով ընդունելության տվյալի):

Հեռակա ուսուցման համակարգ ընդունված և հրամանագրված ուսանողների թիվը դեռևս հստակ չէ՝ կապված ուսման վարձի վճարման ժամկետի հետ (մրցույթի արդյունքներն ամփոփվել են հոկտեմբերի 10-ին):

Ըստ համալսարանի ընդունելության պլանի՝ առկա ուսուցման մագիստրատուրային հատկացվել է 665 տեղ, որից 95-ը՝ ուսման վարձի լրիվ (100%) փոխհատուցմամբ, 570-ը՝ վճարովի ուսուցման համակարգում: Առկա 665 տեղերին դիմել է 417 դիմորդ, որից ուսման վարձի լրիվ (100%) փոխհատուցմամբ և վճարովի ուսուցման համակարգում ընդունվել են 394-ը, իսկ ուսման վարձը վճարելուց հետո հրամանագրվել է ընդամենը 335 ուսանող: Մագիստրատուրա ընդունված ուսանողների 65%-ը սովորել են ՀՊՏՀ բակալավրիատի միևնույն կամ հարակից մասնագիտություններով, իսկ 35%-ը՝ այլ բուհերի շրջանավարտներ: ՀՊՏՀ բակալավրիատից ՀՊՏՀ մագիստրատուրա անցումը կազմել է 19,2% (նախորդ ժամանակահատվածից շուրջ 8%-ով պակաս):

Ըստ համալսարանի ընդունելության պլանի՝ հեռակա ուսուցման մագիստրատուրային հատկացվել է 490 տեղ: Հեռակա ուսուցման մագիստրատուրա է դիմել 86 դիմորդ. ընդունվել են 60-ը:

Գյումրու մասնաճյուղում ըստ համալսարանի ընդունելության պլանի՝ առկա ուսուցման մագիստրատուրային հատկացվել է 110 տեղ, որից 7-ը՝ ուսման վարձի լրիվ (100%) փոխհատուցմամբ, 103-ը՝ վճարովի ուսուցման համակարգում: Առկա 110 տեղերին դիմել է 37 դիմորդ, որից ուսման վարձի լրիվ (100%) փոխհատուցմամբ և վճարովի ուսուցման համակարգում ընդունվել են 23-ը, իսկ ուսման վարձը վճարելուց հետո հրամանագրվել է ընդամենը 23 ուսանող:

Եղեգնաձորի մասնաճյուղում ըստ համալսարանի ընդունելության պլանի՝ առկա ուսուցման մագիստրատուրային հատկացվել է 30 տեղ, որից 30-ն էլ վճարովի ուսուցման համակարգում: Առկա 30 տեղերին դիմել է 16 դիմորդ, որից վճարովի ուսուցման համակարգում ընդունվել են 13-ը, իսկ ուսման վարձը վճարելուց հետո հրամանագրվել է ընդամենը 13 ուսանող:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության (ՆՄՄԿ) հաստատություններից կրթությունը հեռակա ուսուցման բակալավրիատի 4 մասնագիտությունների կրթական ծրագրերով 2-րդ կուրսում շարունակելու համար դիմել է 309 հավակնորդ (հատկացվել է 93 տեղ): Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանն ուղղված դիմումի համաձայն՝ հնարավորություն է ընձեռնվել գերազանցության դիպլոմ, դիպլոմի ներդիրի միջուկի և ավարտական քնության հավասար միջին թվաբանական ունեցող հավակնորդներին (հավելյալ 55 տեղ) տալ 2-րդ կուրսում հրամանագրման նպատակով առարկայական տարբերությունների հանձնման թույլտվություն: Արդյունքում հեռակա ուսուցման բակալավրիատի 2-րդ կուրս ընդունվել են ՆՄՄԿ հաստատությունների 148 շրջանավարտներ: Հրամանագրված ուսանողների թիվը դեռևս հստակ չէ՝ կապված առարկայական տարբերությունների հանձնման ժամանակացույցի և ուսման վարձի վճարման հետ:

ՀՊՏՀ ֆինանսատնտեսագիտական քոլեջում ըստ համալսարանի ընդունելության պլանի՝ առկա ուսուցման ՆՄՄԿ կրթական ծրագրերին հատկացվել է 440 տեղ, որից 70-ը՝ ուսման վարձի լրիվ (100%) փոխհատուցմամբ, 370-ը՝ վճարովի ուսուցման համակարգում: ՆՄՄԿ տեղերին դիմել է 577 դիմորդ, որից ուսման վարձի լրիվ (100%) փոխհատուցմամբ և վճարովի ուսուցման համակարգում ընդունվել են 441-ը (այդ թվում՝ արտոնություններով և սփյուռքահայերի համար կազմակերպված հարցազրույցով):

Ելնելով վերոգրյալից՝ համալսարանի գիտական խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. 2021-2022 ուսումնական տարվա ընդունող հանձնաժողովի աշխատանքը գնահատել **բավարար**:
2. Հանձնարարել մագիստրոսական կրթական ծրագրեր իրականացնող բոլոր ամբիոններին՝ 20-օրյա ժամկետում մշակել իրենց մասնագիտական կրթական ծրագրերի վերաբերյալ բակալավրիատի ուսանողների իրազեկման և մասնագիտական կողմնորոշման խթանման միջոցառումների հստակ ժամանակացույց (2021 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2021 թվականի

դեկտեմբերի 20-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում)՝ գովազդատեղեկատվական նյութեր, դասավանդողների, հատկապես հրավիրյալ դասախոսների վերաբերյալ տեղեկատվական նյութեր ՀՊՏՀ կայքէջում զետեղելու և բակալավրիատի ուսանողների շրջանում տեղեկատվական հանդիպումներ կազմակերպելու համար:

3. Հանձնարարել մարքեթինգի և հասարակայնության հետ կապերի բաժնին՝ վերանայել համալսարանի կայքի միջոցով ուսանողներին և դիմորդներին տրամադրվող տեղեկատվության ձևաչափերը և դրա տարածման ձևերը:
4. Հանձնարարել ուսումնական բաժնին և մասնագիտական ամբիոններին՝ մինչև 2022 թվականի փետրվարի 1-ը մշակել բոլոր կրթական ծրագրերի վերջնարդյունքների և ուսումնական պլանների ներկայացման միասնականացված ձևաչափ, իսկ մարքեթինգի և հասարակայնության հետ կապերի բաժնին՝ վերանայել բացի դիմորդի էջից նման տեղեկատվությունը ՀՊՏՀ կայքէջի այլ հատվածներում և ավելի հասանելի կերպով զետեղելու գործիքակազմը:
5. Հանձնարարել շարունակական կրթության բաժնին և կարիերայի կենտրոնին՝ մշակել և մինչև 2021 թվականի դեկտեմբերի 15-ը հաստատել ՀՀ ՆՄՄԿ հաստատություններ և ավագ դպրոցների 10-րդ ու 11-րդ դասարաններ մասնագիտական կողմնորոշման այցելությունների և ՀՊՏՀ բաց դռների օրերի ժամանակացույցերը, իսկ մարքեթինգի և հասարակայնության հետ կապերի բաժնին՝ մշակել նմանատիպ այցելությունների մարքեթինգային և գովազդային աջակցման միջոցառումների պլան:
6. Հանձնարարել ֆինանսների, բանկային գործի և ապահովագրության, կառավարման ամբիոններին և ուսումնական բաժնին՝ ուսումնասիրել «Կառավարում» և «Ֆինանսներ» մասնագիտությունների կրթական ծրագրերից շրջանավարտների դեպի մագիստրատուրա անցման ցածր տեսակարար կշռի և 2020-2021 ուսումնական տարվա համեմատությամբ դրա էապես կրճատման պատճառները:
7. Հանձնարարել ուսումնական բաժնին՝ 2018-2021 ուսումնական տարիներին բակալավրիատի և մագիստրատուրայի դիմում հայտերի և «Ամբերդ» հետազոտական կենտրոնի իրականացրած աշխատաշուկայի մոնիթորինգի արդյունքների համակողմանի վերլուծության ու համադրման հիման վրա վերանայել 2022-2023 ուսումնական տարվա բոլոր կրթաձևերի և մասնագիտական կրթական ծրագրերի գծով նախնական հայտերի կազմման տարեկան պլանները:
8. 2022-2023 ուսումնական տարվանից սկսած ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղում որևէ կրթաձևում ընդունելություն չհայտարարել բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերով:
9. 2022-2023 ուսումնական տարում 20-ական տեղով կրճատել ՀՊՏՀ «Բնապահպանություն և բնօգտագործում», «Սերվիս» և «Զբոսաշրջություն»

մասնագիտությունների առկա ուսուցման բակալավրիատի տեղերի քանակը, 60 տեղով՝ ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի առկա ուսուցման բակալավրական մասնագիտությունների տեղերի քանակը:

10. Հանձնարարել որակի բաժնին և շարունակական կրթության բաժնին՝ մինչև 2022 թվականի փետրվարի 15-ը ուսումնասիրել բակալավրիատի և մագիստրատուրայի 1-ին կուրսերի ուսանողների՝ ՀՊՏՀ դիմելու (մասնագիտական կողմնորոշման) դրդապատճառները՝ արդյունքները ներկայացնելով մարքեթինգի և հասարակայնության հետ կապերի բաժնին 2022-2023 ուսումնական տարվա ընդունելության գործընթացի մարքեթինգային աջակցման ծրագրերի իստակեցման համար:
11. Հանձնարարել ամբիոններին՝ մշակել համատեղ կամ կրկնակի աստիճանաշնորհման կրթական ծրագրեր՝ արտաքին գործընկերների որոնման աշխատանքներում ներգրավելով արտաքին կապերի դեպարտամենտին:
12. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Վ.Գրիգորյանին:
13. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

2021 թ. հոկտեմբերի 11
Երևան